

Հայոց լեզու և գրականություն

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՐՑԱՍԻԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԻ¹

Հոդվածում Արցախի բանաստեղծների խոսքարվեստի բազում իրողություններից համառոտ վերլուծված են բառապաշարային ու քերականական այնպիսի իրողություններ, որոնք առանձնակի գունագեղություն են հաղորդում նրանց ստեղծագործություններին և նպաստում չափածո կերտվածքի ժողովրդայնությանն ու բանաստեղծականությանը:

Արցախյան գրականությունը՝ հայ գրականության արժանավոր, անբաժան մի մասը, 80-90-ական թվականներին թևակոխեց զարգացման նոր շրջան: Ծնվեցին մարտական, հայրենաշունչ երգեր, որոնցում անկեղծությունը, հաղթական հատու շեշտերը, տաք անմիջականությունը ստեղծագործական հաջողության նախապայման դարձան: Ստածողության եղանակների, գիտակցության ձևերի ու արտահայտությունների նորացումը իր ազդեցությունը թողեց բանաստեղծական արվեստի լեզվի զարգացման վրա: Բառապաշարի և քերականության մեջ հետզհետե սկսեցին իրենց զգալ տալ թարմ շերտեր ու նոր երանգներ, որոնց համառոտ վերլուծությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Արցախի բանաստեղծների ստեղծագործությունների բառապաշարի առաջին իսկ քննությունից նկատվում է, որ նրանց խոսքը համեմված է ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ տարրերով: Դրանց գործածությունն ամենից առաջ պատճառաբանված է երկի բովանդակությամբ, նյութի թելադրանքով, տվյալ միջավայրի ու տեղի համապատասխան երանգավորում ստեղծելու միտումով, ինչպես նաև հեղինակի պարզ ու անպաճույճ մտածողությամբ ու ոճի անհատականությամբ: Հաճախ, կախված նյութի բնույթից, մի ընդհանուր շղթայի մեջ իրար կողքի առատորեն օգտակվում են և՛ սովորական, և՛ դարձվածային հարադրություններ, փոխաբերական ու թևավոր արտահայտություններ՝ շաղախված բանաստեղծական թարմ ու ինքնատիպ հնարանքներով: Մեր միտքը հավաստենք փաստերով.

-Փրկեա...

Ինչի՞ց...

Գորշ հորդանների անզուսպ հեղեղից,

որ համակործան գալիս է անվերջ,

տանում՝ ոչ միայն

քո արտը ծլած,

մարում ոչ միայն

թոնիրը վառած,

այլև ակունքն է քանդում քո լեզվի,

¹ Հաշվի առնելով հոդվածի ծավալը ընդգրկել ենք Արցախի ոչ բոլոր բանաստեղծներին:

մայրենի խոսքիդ կրակը մարում,
մանկան բերանից կես պատառի հետ
հայկյան հոգու նշխարը խլում,
տաճարներիդ հետ՝
հոգուդ սրբազան աշխարհը փլում:

(5, 60)

Ու մինչ մոտենար մանչը, Մաշտոցին,
Սանասի լեզվի կապը արծակվեց,
ծնկաչոք եղավ Մանասը մեկեն,
ասես կողկողաց...

(5, 76)

Վ. Հակոբյանի «Ս. Մաշտոցն Վմարասում» պոեմից քաղված այս երկու հատվածում զգում ենք ժողովրդական խոսքի հմայքը: Վերը բերված դարձվածների և ժողովրդական այլ տիպի բառաձևերի ամենայուրահատուկ կողմն այն է, որ դրանք արտահայտում են մեր ժողովրդի ազգային մտածողությունը: Բերենք մեկ այլ օրինակ.

Սիրիր նրանց,
Սիրիր սրտանց,
Որ ոտքիդ տակ միշտ լինի հող,
Օջախիդ մեջ՝ չմարող պող,
Որ միշտ բարին թագավորի,
Բախտը ժպտա միշտ հողվորին:

(2, 22)

Ընդգծված միավորները իրենց գործածության հաճախականությամբ խոսքին հաղորդում են կենդանություն, հյուսիսություն, համապատասխան դիմ և բնականություն: Դրանք ժողովրդական կենդանի խոսքի այն միջոցն են, որոնց մասին Հովհ. Թումանյանը գրել է. «Ազնիվ ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է»²:

Ժողովրդական իմացության և լեզվական արտահայտչամիջոցների օգտագործմամբ հարստացնելով և ընդլայնելով իրենց ստեղծագործական հրճարավորությունները՝ Արցախի բանաստեղծները միաժամանակ որոշակի ներդրում են կատարում մեր լեզվի զարգացման մեջ: Նրանք, օգտվելով մեր լեզվի բառակազմական հարուստ հնարավորություններից, կազմում են նոր բառեր ու արտահայտություններ և հեղինակային նորակազմությունների շնորհիվ կարողանում ինքնատիպ ու պատկերավոր դարձնել խոսքը, տվյալ դեպքում ճշգրտորեն արտահայտել իրենց մտքերի ու զգացմունքների նրբերանգները: Արցախի բանաստեղծների նախասիրած բառակազմական հմարաններից մեկը գոյականներից վ բայաձևացով բայեր կազմելն է: Մեր գրականության մեջ հայտնի բառաստեղծական այս միջոցը նախ և առաջ կիրառվում է լեզվական նմանողության սկզբունքով:

Բերենք անվանակազմ բայերի գործածության մի քանի բնագրային օրինակներ.

Թող չկորչեմ օրերի չոր խաշամի տակ,
Թող արմատվեմ՝ ծիլ ու ծաղիկ տալու համար,
Թող ցորենվեմ՝ միայն ոսկե հաշանի տակ,
Թե մոլորվեմ՝ ինչպես սարում արևն անմար:

(3, 68)

² Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1956 թ., էջ 167:

Մագաղաթված դեմքերին ածխագիր է օրն ասես,-
Բռնցքներում երկնքված հեմակներ են վեր հառնում
Վարդան, Վազգեն ախպերը դուռն են ջարդում քարայրիս,
հողն Արցախա վրեժվում, որդոց շիրմին մխում է,
և լողում է հեղեղում աստվածատուր մի աշխարհ:

(5, 92)

Պատկերավոր արտահայտություններ են արմատվել, ցորենվեմ, մագաղաթված, երկնքված, վրեժվում բառերը: Այս և նման բայերում անվանական բաղադրիչի իմաստը ուղղակիորեն անցնում է բային, որով և առարկային մի տեսակ տրվում է գործողության կամ շարժման բնույթ: Վ. Հակոբյանի հայրենասիրական ստեղծագործություններում հանդիպում են նաև բայական նորակազմություններ՝ գոյական + ավոր + վել կամ գոյական + ան + ալ(ել) կաղապարով: Այսպես՝

Իմ Արցախա սուրբ աշխարհի
ճամփաները բանուկանան,
արևները՝ հանդավորվեն,
կարոտները՝ սրտավորվեն,
տղավորվեն աղջիկները,
երկինքները՝ հավքավորվեն,
լքյալները՝ երգավորվեն,
սիրավառվեն գարունները...

Արցախահայ պոեզիայում առավել մեծ չափով հեղինակային նորաբանություններ են կազմվում բառաբարդման սկզբունքով: Օրինակ՝ շանթակուտակ, որդեհմա (Ս. Խ.), հուզավարար, բոլորապառուղ, թանձրաթախիծ, մերծունոտություն, երկնաշշուռնջ, ամբողջալուր, մշտամատույց (Վ. Հ.), աստղահամ, ալյուրահամ, շանթածրար, հյուրահոտ, առասպելապատ, մահահողի (Ռ. Ե.) և այլն: Հետաքրքիր են առանձնապես բարդության բաղադրիչների որևէ եզրի համաբանությամբ կազմված նորաբանությունները: Այսպես՝ արցախաբույր, արցախածուլ, արցախաթույր (Գ. Գ.), մարմնամարմանդ, մարմնամոծիկ, մարմնածոծիկ, մարմնաշողիկ, ծաղկատաճար, ծաղկաբերդիկ, ծաղկատիկ, թոնրաշուրթիկ, թոնրաթեծ, թոնրապսակ, թոնրապողիկ (Վ. Հ.), ցավահարույց, ցավամոռաց, հանքաեռ, գալիքաեռ, արշալուսաեռ, արեգակնաեռ (Ռ. Ե.) և այլն:

Պայմանավորված թեմայով և ընդգրկած ժամանակաշրջանով՝ Արցախի բանաստեղծներն իրենց երկերում օգտագործում են նաև հնաբանություններ: Բառապաշարի այս շերտին նրանք առանձնապես դիմել են պատմական թեմայով գրված պոեմներում («Մեսրոպ Մաշտոցն Ամարասում», «Տաճարն Աստծո» (Վ. Հ.), «Խաչենաբերդ» (Հ. Բ.), «Արցախի արծիվը» (Ս. Խ.), որոնց ծնունդը արցախյան շարժման հենց սկզբին խիստ խորհրդանշական էր:

Վերոհիշյալ պոեմների մեջ գրաբարյան լեզվական ատաղծի հմուտ օգտագործմամբ ու մշակվածությամբ առանձնանում է «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմը, որտեղ գրաբարի քերականական ու բառապաշարային տարրերն այնպես են գործածված, որ թեպետ զգալ են տալիս հին հայերենի շունչը, բայց և ամենևին չեն կաշկանդում պատումը: V դարի բառամթերքից քաղված բառածևերի ինքնատիպ գործառությամբ հեղինակը պոեմի հենց սկզբից ընթերցողին տեղափոխում է պատմական հեռավոր ժամանակները և լեզվական համապատասխան միջոցներով ցուցադրում դարի, տարածության ու իրադարձությունների, դրանց հորձանուտի մեջ ձևավորվող կերպարի բնական գույներն ու գծերը:

Եվ մի քայլ արավ Մեսրոպ Մարգարեն
ծաղկածոփք ու լուրթ ճամփի երկայնքով,

ու ճանփան դարձավ կենաց մայրուղի,
 ու ճանփան դարձավ փանդիո յոթնաղի,
 և հոգեընծա
 խոսքեր հնչեցին,
 և ախորժալուր
 մայրուղին իջավ՝
 որպես թե Սինա լեռան փեշերից:

(5, 53)

Ահա մեկ ուրիշ հատված, որտեղ մեր առաջ կանգնում է Վարդան Մամիկոնյանն իր հոգեբանությամբ ու մտածողությամբ.

-Քիչ առաջ եղա մոտիկ շենքերում,
 ես ուստրեր տեսա առյուծակորով
 ու տեսա դուստրեր՝
 պերճ ու նազանի,
 նույն իղծք ու տենչով դեմքները վառած
 դիցեր են, ասես, երկնառաք:
 Եվ ամենուրեք ցավը նույնն է,
 ուրեմն՝ ելքն էլ պիտի նույնը լինի:
 Մեր սուրբ դպրահոր արարած գրով,
 մեր դարբինների կռած սրերով
 պիտի նորոգենք,
 ու նորագրենք,
 արդարագրենք
 գիրը մեր ազնիվ ճակատին դաջված...

(5, 82)

Խոսքային հիշյալ շղթայում գործածված վաղնջական ու հնաբույր բառերը պատմական միջավայրն ու կեցությունը բնութագրող, հույզով լիցքավորված հասկացություններ են, որոնք ներուճակությամբ բացահայտում են կերպարի էությունը: Պատկերի համար հիմք ու հենարան են ծառայում ուստրը, դուստր, առյուծակորով, պերճ, նազանի, իղծք, դիցեր, դպրահայր բառերը: Այս և նման բառերն այստեղ քարացած ձևեր չեն, դրանք մարմնավորում են նոր գաղափարներ՝ հաստատելով վերապրելու իրենց իրավունքը: Բերենք մեր նախնյաց մտածելակերպն ու գրելածնը հիշեցնող մի քանի այլ բառական միավորներ, որոնք առավել ցայտուն ու շոշափելի են բնութագրում հնօրյա հասարակական հարաբերություններն ու ազգային կենցաղը. ամա («Մահը խորթ է, բայց իղծերն են ամա», 8-21), խորան («Բառդ խորան է, մաքրող և փրկող», 8-26), հավատամք («Դառնում է մի հավատամքի սաղմ», 8-24), գուռ («Մեր բարբառի գուռից ջուր է խմել Աստված», 8-23), խոլ («Եվ Բուղան կրկին հրաման տվեց խոլ պատերազմի», 4-41), խանդաղատամք («Խանդաղատամքից մեկ-երկու կաթիլ խտուտ են գալիս», 5-91) և այլն:

Արցախահայ բանաստեղծների ստեղծագործությունների ուսումնասիրությունը բացահայտում է նաև նրանց նրբանկատ վերաբերմունքը քերականական և, առանձնապես, շարահյուսական արտահայտությունների գործառության հարցում: Արցախահայ պոեզիայում հանդիպող ամենատարբեր տեսակի ու բնույթի միակազմ և երկկազմ նախադասությունները, բաղադրիչ տարրերի իմաստային-քերականական տարբեր հարաբերություններով բարդ նախադասությունները՝ աճյամների ու միավորների կապակցության և շարահյուսության ամենաբազմազան դրսևորումներով, նպաստում են բանաստեղծների ոճի սեղմությանը, հակիրճությանը, ծառայում իբրև մտքի խտացման միջոցներ և իրենց հերթին նպաստում նրանց անհատականության ձևավորմանը:

Բանաստեղծների խոսքին հատուկ հմայք, ժողովրդական խոսքի հատուկ երանգ են հաղորդում կախյալ շարահարությամբ նախադասություն-

ների բազմազան կառուցվածքները: Բերենք մի քանի շարահարական բարդ նախադասություններ, որոնց կախյալ բաղադրիչները դրսևորում են քերականական տարբեր հարաբերություններ.

Հմտածես տխուր բաներ, քեզ ի՞նչ՝ հասնել-չհասնել,
Հոգնես՝ մատիր, հանգիստդ առ, վեր կաց նորից ու գնա:
Ով էլ հարցնի քեզ քո մասին, ասա՝ վաղուց չեմ տեսել...
Խոսքով արի՛ ուշացար, վեր կաց, դեհ՝ վեր, մի մնա...

(6, 130)

Փոխեցի՞ր լեզուդ՝ արյունն է փոխվում,
Քո երակների արյունը որդան.
Երբ հայերեն չէ քո սիրտը խփում,
Փվվում է սյունը հայրենական տան:

(5, 120)

Շարահարության ոճական առանձնահատկություններից մեկն այն է, որ նման կապակցությունը միտքը դրսևորում է ոչ միայն ամփոփ ու սեղմ ձևերի մեջ և կենդանի խոսքի պես պարզ է ու վճիտ, այլ երբեմն ի հայտ է բերում իմաստային որոշ նրբերանգներ, որոնք չունեն կամ չեն կարող նույն պատկերավորությամբ արտահայտել համապատասխան շաղկապական գուգահեռները:

Դա բավականին ցայտուն է երևում վերջին հատվածում, որտեղ կախյալ նախադասությունը շարահարության շնորհիվ ստացել է հարցական հնչերանգ և դրսևորում է մի տեսակ անուղղակի ճարտասանական հարցում՝ «փոխեցի՞ր լեզուդ», որը սակայն պատասխան չի պահանջում: Վերջինս ներուճակությամբ ըմբռնվում է իբրև պայման մեկ այլ գործողության, որը հենց արտահայտված է գլխավոր նախադասության մեջ՝ իբրև հիշյալ պայմանի հետևանք՝ «արյունն է փոխվում»: Բացի դրանից, եթե պայմանի կախյալ նախադասությունը լիներ շաղկապական, ճարտասանական ոճը պիտի փոխվեր պատմողականի, որը տվյալ դեպքում կթուլացներ հուզականությունն ու ներգործման ուժը:

Ինչպես գիտենք, շաղկապական և հարաբերական երկրորդական նախադասությունները սկսվում են համապատասխան կապակցության բառերով: Սակայն ապացուցված է, որ նախադասության միավորների դասավորությունը քարացած չէ, և ոճական նկատառումով կարելի է պատմականորեն ընդունված և օրինաչափ ձևերի կողքին օգտագործել նաև կապակցող բառերի շրջուն շարադասությունը: Ոճական այս հնարանքը, հօգուտ տաղաչափության, տրամաբանական շեշտի կամ իմաստային երանգների հարստության, վարպետորեն է գործածված հայ պոեզիայում: Օրինակ.

Հեռվում էլ անգամ թե խփեն մեկին,
ցավի մի ալիք ձեզ կհամակի,
պատժվողը գուցե ուրիշ է այսօր,
ձեր հերթը, անշուշտ, վաղը կհասնի:

(10, 23)

Երբեմն միևնույն նախադասության մեջ հանդիպում են միևնույն շաղկապների կամ հարաբերականի շարադասության տարբեր կիրառություններ, մեկ՝ կանոնավոր, մեկ՝ շրջուն, որն էլ բազմազանություն է մտցնում քերականական ձևերի մեջ և դրանով կամխում միապաղաղությունը:

Երբ հողն արմատի միջով չի ձգվում,
երբ չի աստղոտվում մութը երկնքով,
երբ անլուր քարը արդեն չի երզում՝
անգամ կաքավն է երբ իջնում քարին,
ուրեմն՝ ուղին ուղիղ չի գնում:

(7, 27)

Մտքի համառոտության ու սեղմության հասնելու նպատակով Արցախի բանաստեղծները գործածում են նաև զեղչված անդամներով նախադասություններ: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ զեղչված է լինում բաղադրյալ ստորոգյալի հանգույցը կամ պարզ ստորոգյալը, իսկ նրանց լրացումները մնում են: Օրինակ՝

Հորս ճակատին՝ քարափի կնճիռ,
աչքերում՝ հաստատ վճիռ կայծակի...

(9, 46)

Նկատելի է, որ զեղչված է կա և նման իմաստով որևէ ստորոգյալ, սակայն առկա է ստորոգյալի լրացումը՝ տեղի պարագան (ճակատին, աչքերում), և նախադասությունը հնչեղանգային ավարտվածությամբ ստանում է ամփոփվածություն:

Երբեմն այսպես շարադրվում են քառատողեր, նույնիսկ ամբողջական հատվածներ, որոնք դառնում են գրելու ոճ:

Իմ երազները՝ լեռների ծնունդ,
Լեռների սնունդ՝ իմ երազները,
Իմ մուրազները՝ լեռների հոգի,
Լեռների ոգի՝ իմ մուրազները:

(3, 51)

Բարդ նախադասության ոճական արժեքը քննելիս՝ ուշադրություն է գրավում կառուցվածքային մեկ այլ բնորոշ իրողություն ևս: Ինչքան էլ մըտքերը ծավալվում են, նախադասությունները որքան էլ հարստանում են նոր անդամներով, կախյալ կամ անկախ միավորներով, միևնույն է, երբեք չի խախտվում շարադրանքի ամբողջությունը և կառուցվածքային համաչափությունը, ինչը արտահայտվում է մասերի շարահյուսորեն ճշգրիտ և կարելի է ասել՝ տվյալ դեպքի համար առավել ընդունելի տրոհումներով:

Ծառը, որ անճիգ ելնում է ահա
քո կանաչ ափից,
իմ երազներին ու քո ծեռքերին
ուղիղ զուգահեռ,
քո աղբյուրների անմահությունն է,
և արժանի է անպայման երգի,
քանզի ոգի կա սլացքում նրա,
քո ոգին պայծառ՝
փրկիչն ամենայն:

(7, 273)

Ինչպես տեսնում ենք, զեղարվեստական այս հարաբերականորեն ամբողջական կառույցի բաղադրիչների, ենթաբաղադրիչների ներդաշնակ ու ճկուն շարահյուսությամբ ստեղծվել են բանաստեղծության այնպիսի տողանցումներ, որոնք յուրովի տրոհելով խոսքը՝ պահպանում են ամբողջի ռիթմական միությունը:

Ամփոփելով արցախահայ բանաստեղծների հայրենասիրական ստեղծագործությունների բառապաշարի ու քերականական իրողությունների շատ համառոտ քննությունը՝ կարող ենք ընդգծել, որ նրանց խոսքարվեստը ամբողջության մեջ աչքի է ընկնում լեզվական բարձր մշակույթով, զեղարվեստական խոսքի ոճավորման հարուստ ու նպատակային միջոցներով, որոնք գրական ստեղծագործության բարձր արվեստի կարևոր պայման են:

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

1. Գ. Գաբրիելյան, «Աղավնատուն», Բ., «Յազըչի», 1987 թ.:
2. Դ. Բեգլարյան, «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», Երևան, «Նաիրի» հրատ., 1989 թ.:
3. Ս. Խանյան, «Արցախյան ղողանջներ», Երևանի պետ. համալսարան, 1991 թ.:
4. Ս. Խանյան, «Արցախի արծիվը», «Արցախ» հրատ., 1995 թ.:
5. Վ. Հակոբյան, «Ամարասի գանգերը», Երևան, «Արևիկ» հրատ., 1989 թ.:
6. Վ. Հակոբյան, «Տաճարն աստծո», Երևան, 1990 թ.:
7. Վ. Հակոբյան, «Մեմարան», Երևանի համալսարանի հրատ., 1996 թ.:
8. Ռ. Եսայան, «Ծարաված հետքեր», Ստեփ., «Մաշտոց» հրատ., 1991 թ.:
9. Ռ. Եսայան, «Նժար», «Արցախ» հրատ., 1995 թ.:
10. Դ. Ալեքսանյան, «Կենսադաշտ», Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 թ.:

ГАЗАРЯН АСМИК

КРИТИЧЕСКИЙ ОБЗОР ЯЗЫКОВЫХ ОСОБЕННОСТЕЙ ПРОИЗВЕДЕНИЙ АРЦАХСКИХ ПОЭТОВ

Р е з ю м е

В статье из множества методов и приемов искусства художественного слова арцахских поэтов кратко проанализированы те факты лексики и грамматики, которые придают особый колорит их произведениям и обуславливают народность и метричность их поэзии.

HASMIK KHAZARYAN

THE CRITICAL SURVEY OF THE LANGUAGE PECULIARETY OF ARTSAKH POETS' WORKS

S u m m a r y

In the article of the great number of methods and ways of Artsakh poets' word art, are briefly analysed the facts of vocabulary and grammar that give a particular colouring to their poetry and simulate the nationality and the metric of their poesy.